# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1886-Ա « 09 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ, ՆՈՐՔ 11-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.73 ՀԱՍՑԵՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՎՈՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՓԱՓԱՋՅԱՆԻ ԵՎ ՀԱԿՈԲ ԳԱՐԵԳԻՆԻ ՓԱՓԱՋՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-ին, 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 31.03.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով «ՍտեՊռոեկտ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2023թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, ինքնակամ կառույցների արտաքին չափերի մասին «ՉԱՓԱԳՐՈՒՄ ԷԼԻՏ» ՍՊԸ-ի կողմից 09.12.2022թ. տրված տեղեկանքը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձանց դիմումները (16.12.2022թ. հ.Դ-121805-22, 26.06.2023թ. հ.Դ-75721, 07.08.2023թ. հ.Դ-96647-23, 16.10.2023թ. հ.Դ-127037-23, 18.06.2024թ. հ.Դ-77490-24, 18.09.2024թ. հ.Դ-118614-24, 20.10.2025թ. հ.Դ-115677-25, 11.11.2025թ. հ.Դ-124824-25, 12.01.2026թ. հ.Դ-1955-26, 03.03.2026թ. հ.Դ-20216-26).

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Նորք-Մարաշ վարչական շրջան, Նորք 11-րդ փողոց հ.73 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 553.98 քառ.մետր հողամասի գործառնական նշանակությունը (օգտագործման նպատակը) սահմանել՝ բնակելի կառուցապատման:

2. Երևան, Նորք-Մարաշ, Նորք 11-րդ փողոց հ.73 հասցեում՝ ընդհանուր բաժնային սեփականություն (անարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.11.2016թ. հ.08112016-01-0031 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2022JFFWRN) հանդիսացող հողամասում քաղաքացիներ Լևոն Գարեգինի

Փափազյանի և Հակոբ Գարեգինի Փափազյանի կողմից ինքնակամ իրականացված 493.3 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի տուն՝ 440.4 քառ.մետր, հասարակական (խանութ)՝ 52.9 քառ.մետր) և ինքնակամ բացված դռները 2 (երկու) հատ ճանաչել օրինական:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձինք.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 2067263 (երկու միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**